

ՎԵՀԱՓԱՌԱԿԱՆ ԵՐԿՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ

Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Ա-ին, ամանորյա այցելությունից վերադառնալիս, Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը մի ձեռագիր էր հետը բերել՝ քննության նպատակով: Վեհափառ Հայրապետը ձեռագիր Ավետարանն ստացել էր հունվարի 1-ին, «... վասն հիշատակի հանգուցյալ Տիրամոր՝ Սիրանույշ Պալճյանի, որը նվիրեց մեր ազգին շինարար, հայրենասեր, բարի և անբիծ Հայրապետին...» մակագրությամբ: Նվիրատուն Վահան եպիսկոպոսն էր:

Ուսումնասիրությունից հետո, ձեռագիրը, հնագրական համառոտ նկարագրությամբ, տնօրենը և ես ներկայացրինք Վեհափառին՝ ասելով, որ 13-րդ դարում Հավուց թառում էր, 15-րդում՝ Մաքենոցաց վանքում, 16-րդում՝ Արցախի Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղում, «Ծեր Աւետարան» մականունով, որ ստացել էր հնության համար:

Այստեղ Բանանց գյուղի համայնքի միջոցներով նորոգվում և կազմվում է վերջին անգամ, որպես գյուղի «պահապան Ավետարան», որով հիվանդներ էին բուժում: Ունի կից «Բժշկութեան Աւետարան»:

— Մատենադարանի հնագույն թվակիր մատյանների հետ համեմատությունը ցույց տվեց, որ այն մեզ հայտնի ամենահին ձեռագիրն է՝ գրված մոտավորապես չորրորդ դարում:

Գոհ էր Վեհափառը.

— Է, լավ. Մխիթարյան հայրերը կհամաձայնին:

— Կհամաձայնին,—ասացի,—մանավանդ եթե տեսնեն ձեռագիրը: Մենք թագավորների, կաթողիկոսների, թագուհիների և ուրիշ նվիրատուների անուններով սրբազան ձեռագրեր ունենք, բայց «Վեհամոր Ավետարան» չունենք: Հիմա կունենանք, այն էլ՝ հնագույնը:

— Այդպե՞ս կանվանեք:

— Արդեն մկրտվեց այդպես:

1975 թ. հուլիսի 25-ին Վեհափառ Հայրապետը այցելեց Մատենադարան և հանդիսավոր կերպով «Վեհամոր Ավետարանը» ընծայեց Մատենադարանին՝ այսպիսի մակագրությամբ. «Մենք Վազգէն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, այսօր 25 յուլիս 1975 թուին, սոյն ձեռագիր Աւետարանը յանձնեցինք Երևանի Ս. Մեսրոպի անուան Մատենադարանին: Վազգէն Ա.»:

1991 թվականին Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ, Մատենադարանի աշխատակից Լևոն Տեր-Պետրոսյանը Հայոց խորհրդարանի և ժողովրդի առջև Հայաստանի անկախության հավատարմության երդում տվեց «Վեհամոր Ավետարանի» վրա:

1979 թ. աշխատանքային մի օր դարձյալ Վեհարանում եմ: Վեհափառ Հայրապետը ցույց է տալիս մի ձեռագիր, որ վաճառում են: Ձեռագիրը շատ լավն է. տերերը որոշակի գին չեն ասում, միայն շատ դրամ են ուզում:

Վեհափառը ձեռագիրը հանձնեց ինձ՝ արժեքավորելու: Ես առանձնացա ձեռագրի հետ: Գրչության հանգամանքները հայտնի չեն: Ձունի գրչի հիշատակարան: Հնագույնը նորոգման հիշատակարան է՝ 1088 թվականից, ուրեմն ձեռագիրը գրվել է դրանից առաջ, խորաններից արտանկարված է Մատենադարանի 1038 թ. գրված Ավետարանի զույգ խորանները և Մարկոս ավետարանչի նկարը, ուրեմն այդ թվականից էլ առաջ է գրված: Գրության վերջին սահմանը 10-րդ դարն է: Հնագույն ձեռագրերի մեջ արտակարգ նկարազարդված մատյան է:

Այս և այլ կարգի առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ ձեռագիրն արտագրված է շատ հին օրինակից՝ պահպանելով տողը՝ տողի, էջը՝ էջի, պրակը՝ պրակի դեմ գաղափարելու ձևը: Մատենադարանում այսպիսի ձեռագիր չունենք: Չկա նաև դրսի հավաքածուներում: Ձեռագիրը անհայտ է մասնագետներին:

Հետագա հիշատակարաններից երևում է, որ այն ևս Սյունիքից անցել է Արցախ և այստեղից՝ Վեհարան: Ճակատագիր է:

Ձեռագրի կորուստը (կարող են դուրս տանել Հայրենիքից) կորուստ է հայ ձեռագրական մշակույթի, հայագիտության համար, ուստի խնդրեցի թույլ տալ ձեռագրի մանրաժապավենը հանել, որ բոլորովին չկորչի:

Վեհափառը մտազբաղ էր:

— Ես Հայրապետական խոսք եմ տվել տերերին, որ ձեռագիրը Վեհարանից դուրս չեմ հանի: Բայց քանի որ ձեռագիրը կորստի ենթակա է, իմ Հայրապետական խոսքը ժամանակավոր հետ կառնեմ: Տարեք, կնկարեք և վաղը կբերեք:

Մյուս օրը ձեռագիրը հանձնեցի Վեհափառին:

— Ձեր Հայրապետական խոսքը կրկին ուժի մեջ է:

— Իսկ որքան կարժենա ձեռագիրը:

— Վեհափառ Տեր, այս ձեռագիրը գին չունի: Ինչ էլ որ ուզի, պետք է վճարել: Եվ մենք «Վեհամոր Ավետարանի» կողքին կունենանք նաև «Վեհափառի Ավետարան»:

* * *

«Այս տարվա (1978 թ.) գարնանամուտը յուրովի նշվեց Մատենադարանում,—կարդում ենք «Էջմիածին» ամսագրի 1978 թ. «Վեհափառի Ավետարանը» հոդվածում: — Հին ձեռագրերի ինստիտուտ էր այցելել Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը: Վեհափառ Հայրապետը ժամանել

էր իր հերթական նվերով, հազարամյա մագաղաթյա ձեռագրով:

Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն ակադեմիկոս Լ. Խաչիկյանը Բարձր Հյուրին դիմավորելու համար, հավաքված գիտական անձնակազմի ներկայությամբ, խորին հարգանքով և շնորհակալությամբ նշեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի ջերմ սերն ու վերաբերմունքը ամենայն հայոց ձեռագրական գանձարանի նկատմամբ՝ շեշտելով հատկապես հայերեն ձեռագրերի ձեռք բերման և Մատենադարանին նվիրելու նրա վսեմ նախաձեռնությունը, որն սկիզբ է առել դեռևս տասնամյակներ առաջ և շարունակվում է չնվազող եռանդով և միշտ ուրախացնող անակնկալներով: Այդ բանի խոսուն ապացույցն է նաև այսօրվա՝ մարտի 1-ի նվերը:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը իր խոսքում բարձր է գնահատում Մաշտոցի անվան Մատենադարանի ծառայությունները հայ ժողովրդի ու նրա մշակույթի զարգացման գործում, գնահատանքի խոսքեր է ասում գիտական անձնակազմի գործունեության և, մասնավորապես, տնօրեն Լ. Խաչիկյանի հասցեին և նրան է հանձնում իր նվերը՝ Հայրապետական սույն ընծայականով.

«Սուրբ Աւետարանս նուիրում ենք Երևանի Սուրբ Մեսրոպի անուան Մատենադարանին՝ ի վայելումն Ազգիս Հայոց:

Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

1 մարտի 1978
Սբ. Էջմիածին»:

Այդ ժամանակից սկսվեց Վեհափառի Ավետարանի ուսումնասիրությունը: Վիեննայի գիտնականներ Հելմուտ և Հայդե Բուշհաուզենները պարզեցին, որ այդպիսի միայն մի Ավետարան կա 6-րդ դարից, ասորերեն գրված և պահվում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում, որը, սակայն, թերի է և քայքայված: Իսկ Վեհափառի անթերի և լավ պահպանված Ավետարանը պատրաստվում է նմանահանությամբ տպագրության՝ պատմության, հնագրության և մանրանկարչության ուսումնասիրությամբ:

Շուրջ քառասուն տարի առաջ Հայոց նորընտիր կաթողիկոսին բոլորն էին ուզում տեսնել, և այն ոչ մի դժվարություն չէր հարուցում: Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին ամեն օր կարելի էր տեսնել Հին Վեհարանի դիմաց փոքրիկ հովանոցում, Մոր՝ Սիրանույշ Պալճյանի հետ անուշ զրուցելիս...

Այդպես տեսա նաև ես՝ Մորը և Որդուն—Վեհամորը և Վեհափառին...

Վեհամոր Ավետարանը և Վեհափառի Ավետարանը:

Գիրս մնա հիշատակող:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ՁԵՌԱԳՐԱԳԵՏ, ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԴԱՍԱՏՈՒ